



«Այբ կրթական հանգույց» հիմնադրամ
Երևան 0052, Թբիլիսյան խճ. 11/11
Հեռ.՝ +374 60 500 456, +374 94 546 498
info@aybschool.am
www.aybschool.am

«Այբ» դպրոցի գործադիր տնօրեն

ԱՇԽԱՏԱՆՔԻ ՆԿԱՐԱԳՐՈՒԹՅՈՒՆ

Պաշտոնի ընդհանուր նկարագրություն

Գործադիր տնօրենը դպրոցի գործադիր և թիմային բարձրագույն առաջնորդն է, որն անմիջապես ենթակա է դպրոցի հոգաբարձուների խորհրդին (ՀԽ): Նա պետք է առաջ տանի դպրոցի ռազմավարական նպատակները՝ մշտապես գործելով ի շահ աշակերտների:

«Այբ» դպրոցի գործադիր տնօրենը պետք է ամբողջությամբ նվիրված լինի «Այբ»-ի առաքելության ու նպատակների իրագործմանը, ազգային ու միջազգային մակարդակներով ներկայացնի «Այբ» դպրոցն իբրև դրա գաղափարական առաջնորդ և մեծացնի հանրագուտ ծառայությանը դպրոցի նպաստը: Գործադիր տնօրենը պետք է մշտապես նպատակ դնի իրականացնելու դպրոցի կանոնադրությամբ սահմանված առաքելությունը: Նա պետք է ջանա ծառայելու հայկական կրթական համակարգի զարգացման գործին, նպաստի աշակերտների հաջորդ սերնդի ձևավորմանն ու հաջողությանը, հզորացնի դպրոցի շուրջ ստեղծված համայնքը, ինչպես նաև հաստատի ու պահպանի արդյունավետ հաղորդակցություն «Այբ» համայնքի և ավելի լայն հասարակության միջև:

Գործադիր տնօրենի գործունեության ուղղությունները

Ռազմավարական առաջնորդություն

1.1. Դպրոցի անձնակազմի համար լինել ոգեշնչող առաջնորդ, որը կառավարում է դպրոցի կառավարման ավագ թիմին՝ միաժամանակ հոգ տանելով ընդհանուր անձնակազմի և աշակերտների կարիքների մասին:

1.2. Հետևողականորեն առաջ տանել դպրոցի զարգացման գործը՝ ըստ ՀԽ-ի սահմանած ռազմավարական նպատակների՝ թե՛ հայկական կրթական միջավայրում դպրոցի առաջնակարգ դերակատարությունը պահպանելու նպատակով, թե՛ աշակերտներին ընդհանուր հաջողությանը նախապատրաստելու պահանջները բավարարելու համար:

1.3. Նշանակել և վերահսկել կառավարման ավագ թիմ, որը պետք է մշակի և իրականացնի դպրոցի քաղաքականությունը, կանոնները, ընթացակարգերն ու այլ կարգավորումներ, որոնք անհրաժեշտ են դպրոցի կառավարման համար՝ ապահովելով հետևողականություն ու արդյունավետություն գործունեության բոլոր ասպարեզներում:

1.4. Մշտադիտարկել դպրոցի գործունեությունը և այն մշտապես ամբողջական ու անկողմնակալ ներկայացնել ՀԽ-ին, հետևել, որ պարբերաբար անցկացվեն ներքին և արտաքին գնահատումներ առկա խնդիրների բացահայտման և լուծման համար:

1.5. Ֆինանսական թիմի օգնությամբ ապահովել դպրոցի ֆինանսական կայունությունը և ծախսերի արդյունավետ կառավարումը՝ հիմնվելով դպրոցի ռազմավարական նպատակների վրա:

1.6. Ֆոնդահայթայթման աշխատանքներում կատարել առաջնորդի դեր՝ համագործակցելով ֆոնդահայթայթման թիմի հետ՝ դպրոցի ապագա զարգացումը ու կրթաթոշակների ծրագրի հաջող իրականացումը ապահովելու համար, առողջ հարաբերություններ պահպանել ներկա նվիրատուների կուռ խմբի հետ և նոր կապեր հաստատել դպրոցի ֆոնդահայթայթման գործունեության հզորացման համար:

2. Գաղափարական ու արժեքային առաջնորդություն

2.1. Հետևել, որ դպրոցում ընդունված որոշումները հիմնված լինեն մանկավարժության ու բարոյականության վրա, համապատասխանեն «Այբ» համայնքի արժեքներին և բխեն քրիստոնեական ու համաշխարհային արժեհամակարգից. պատրաստ լինել նաև ճնշիչ հանգամանքներում ներկայացնելու դպրոցի արժեքներն ու ուժեղ կողմերը:

2.2. Ամուր հարաբերություններ հաստատել ՀԽ-ի, աշխատակիցների, աշակերտների, ծնողների և համայնքի մնացած անդամների միջև՝ դպրոցի շուրջ ջերմ ու առողջ մթնոլորտ պահպանելու համար, որը պիտի ձևավորվի մեր մշակութային ու քրիստոնեական արժեքներով և հնարավորություն տա աշակերտներին զարգանալու որպես բազմակողմանի պատրաստված, ներդաշնակ ու արժեքահեն ազատ մտածողներ՝ համաձայն «Այբ»-ի աշակերտների ութ առաքիլությունների:

2.3. Աշխատել «Այբ» հիմնադրամի և դրա աջակիցների լայն շրջանակի հետ՝ դպրոցի դերը հետևողականորեն բարձրացնելու համար՝ համաձայն «Այբ» համայնքի կողմից նախասահմանված նպատակների:

2.4. Մեր կրթական հաջողությունը Հայաստանի հանրակրթական դպրոցներում տարածող ծրագրի՝ Արարատյան բակալավրիատի թեկնածու դպրոցների հետ հարաբերություններում պահպանել համակարգային առաջնորդի դերը:

3. Կազմակերպական առաջնորդություն

3.1. Հետևել, որ կառավարման յուրաքանչյուր խմբի աշխատանք ծրագրված, բաշխված, կազմակերպված և գնահատված լինի, իրականացվեն աշխատանքի արդյունավետ պատվիրակում ու հավասարակշռում ըստ անձնակազմի անդամների աշխատանքների նկարագրության և կազմակերպության ընդհանուր կառուցվածքի:

3.2. Տարածել մասնակցային առաջնորդության սկզբունքները դպրոցի բոլոր մակարդակներում:

3.3. Հետևել, որ դպրոցի գործունեությունը համապատասխանի նրա ղեկավարող փաստաթղթերին, առկա ստանդարտներին և նորմատիվ պահանջներին, և դպրոցի աշխատանքային մշակույթը լինի թափանցիկ՝ ըստ ՀԽ-ի սահմանած սկզբունքների:

3.4. Ապահովել անձնակազմի արդյունավետ կառավարման համակարգի կիրառությունն ու մշտական բարելավումը. այդ համակարգը պիտի սահմանի հստակ նպատակներ աշխատակիցների համար և աջակցի նրանց մասնագիտական զարգացմանը:

3.5. Հետևել, որ իրականանա անձնակազմի մասնագիտական զարգացումը, և անձնակազմը մասնակցի իրեն անհրաժեշտ զարգացման խմբային և անհատական ծրագրերին:

3.6. Դպրոցում հաստատել Էթիկական ու բարոյական ստանդարտներ, խիստ արգելել դպրոցի համայնքի անդամների հանդեպ որևէ անհարգալից վերաբերմունք, համոզվել, որ միայն այն մարդիկ են աշխատում դպրոցում, ովքեր համապատասխանում են «Այբ» համայնքի Էթիկական ստանդարտներին ու արժեքներին:

3.7. Առաջնորդել դպրոցի ներքին աշխատանքային միջավայրի շարունակական բարելավման գործընթացը, մշտադիտարկել աշխատակիցների բավարարվածությունն աշխատանքից, շահադրդումն ու արդյունավետությունը, որպեսզի դպրոցի անձնակազմը լիարժեք տեղյակ լինի, թե ինչ պետք է անի արդյունավետ աշխատելու համար:

3.8. Ապահովել «Այբ»-ի շրջանավարտների ներգրավվածությունը դպրոցի գործունեության մեջ, շրջանավարտների թիմի հետ համագործակցությամբ հետևել, որ ադմինիստրատիվ աշխատողներն ամուր ու շարունակական կապ պահպանեն շրջանավարտների հետ

3.9. Հետևել, որ անձնական և դպրոցական շահերը չբախվեն իրար, և որ տարբեր կողմերի շահերի բախումները բացահայտվեն, պատշաճորեն վերահսկվեն ու վերացվեն:

4. Դասավանդում և ուսումնառություն

4.1. Ապահովել կրթության գերազանցություն դպրոցի բոլոր աշակերտների համար, ստեղծել կրթական հարուստ միջավայր՝ զանազան հետաքրքիր ու ոգեշնչող հանդիպումներով, միջոցառումներով, հավելյալ դասերով և հանրօգուտ նախագծերով՝ աշակերտների ակտիվ ներգրավվածությամբ:

4.2. Համոզվել, որ դպրոցի միջավայրը քաջալերում է ուսուցիչներին նվիրվելու կրթությանը և դասավանդումը մեծ արհեստավարժությամբ ու ջանասիրությամբ կատարելու, իսկ աշակերտներին քաջալերում է բացահայտելու իրենց ամբողջական ներուժն ու դրսևորելու «Այբ» դպրոցի աշակերտին հարիր վարքագիծ՝ համաձայն «Այբ» դպրոցի աշակերտի ութ առաքիլությունների:

4.3. Համոզվել, որ դպրոցում «Արարատյան բակավարժատ» ծրագրով մատուցվող կրթությունը պահպանում է իր բարձր որակը, և որ զարգանում են դպրոցին հատուկ կրթական մոտեցումները և կրթական արդյունքների շարունակական բարելավումը, անաչառ չափիչ գործիքների ու ստանդարտների կիրառությամբ մշտադիտարկել դպրոցում մատուցվող կրթության որակը՝ այն բարելավելու շարունակական քայլեր ձեռնարկելու համար:

4.4. Ակադեմիական ու մասնագիտական պարկեշտության օրինակ ծառայել, հետևել այդ պարկեշտության պահպանմանը դպրոցի անձնակազմի գործողություններում:

4.5. Մշտապես սովորել համաշխարհային կրթական ասպարեզում ծագող նոր գաղափարների ու իրողությունների մասին՝ մանկավարժական հետազոտական արդյունքների և առաջատար այլ

դպրոցներում կիրառվող մոտեցումների ուսումնասիրությամբ, այս նոր մոդելները միատեղելի դպրոցի ռազմավարական նպատակների հետ և առաջատար ու արդյունավետ մոտեցումները փորձարկել ու կիրառել:

4.6. Առաջնորդել դպրոցում հետազոտական ու նորարարական աշխատանքների մշտական զարգացումը, քաջալերել աշխատակիցների հետազոտական գործունեությունը և համոզվել, որ դրանց լավագույն արդյունքները կիրառվում են ամբողջ դպրոցում:

4.7. Համոզվել, որ աշակերտներն ինքնաշահադրված են և մշտապես ներքին մղումով ինքնակրթվում են:

4.8. Գտնել ու կիրառել ճիշտ մոտեցումներ աշակերտների վարքագծի բարելավման, նրանց պատասխանատու վարքագծի ձեռքբերման համար՝ առանց աշակերտների ազատության խիստ սահմանափակումների:

4.9. Ապահովել սովորելու անխտրական միջավայր, որն արժևորում է ձեռքբերումների բոլոր ձևերը, մասնավորապես հետևել, որ ուսուցիչներն ու ադմինիստրատիվ աշխատողներն անհավասարաչափորեն չկենտրոնանան բարձր առաջադիմությամբ աշակերտների վրա, այլ ստեղծեն հավասար հնարավորություններ և աջակցեն յուրաքանչյուր աշակերտի անհատական ուսումնառությանը ինքնազարգացմամբ ու անձնական առաջադիմությամբ:

5. Առողջություն և անվտանգություն

5.1. Հետևել, որ պահպանվեն աշակերտների և անձնակազմի առողջությունն ու անվտանգությունը դպրոցում ու դրանից դուրս իրականացվող միջոցառումներում, իրականացնել պարբերական ուսումնամարզական վարժանքներ՝ աշակերտներին ու անձնակազմին արտակարգ իրավիճակներին նախապատրաստելու համար:

5.2. Հետևել, որ իրականացվեն դպրոցի գույքի անվտանգ պահպանման բոլոր անհրաժեշտ միջոցառումները:

6. Համայնք

6.1. Պահպանել «Այբ» համայնքի հետ հարաբերությունների բարձր մակարդակը և էլ՝ առավել ամրապնդել դրանք:

6.2. Պահպանել ամուր կապ դպրոցի և լայն հասարակության միջև, լինել դպրոցի և ամբողջ «Այբ» համայնքի գլխավոր ներկայացուցիչը կրթական հարցերում, տարածել դպրոցի հիմքում ընկած գաղափարախոսությունը, նպաստել դպրոցի նպատակների ու գործողությունների դրական ընկալմանը հանրության շրջանում, վաստակել հասարակության վստահությունն ու աջակցությունը դպրոցի աշխատանքներին:

6.3. Պահպանել ակտիվ կապ ավելի լայն կրթական համայնքի հետ, մասնավորապես Հայաստանում տարածելով «Այբ»-ի ձեռքբերումներն ու ազդեցությունը երկրի կրթական ոլորտում, դպրոցում կիրառվող մանկավարժական մոտեցումներն ու փիլիսոփայությունները, բարձրացնել ուսուցչի՝ որպես աշակերտների ամբողջական ներուժը զարգացնողի դերակատարության ընկալումը և աջակցել երկրում տեղի ունեցող արդյունավետ կրթական զարգացումներին:

7. «Այբ» դպրոցի հոգաբարձուների խորհրդի հետ աշխատանք

7.1. Ձարգացնել կամ թարմացնել դպրոցի ռազմավարությունն ըստ ՀԽ-ի տեսլականի ու ցուցումների և ներկայացնել ՀԽ-ի հաստատմանը:

7.2. Պատրաստել ու ՀԽ-ին ներկայացնել պարբերական զեկույցներ կառավարման գործընթացի մասին՝ ըստ ՀԽ-ի սահմանած ընթացակարգերի և ժամկետների:

7.3. Առաջնորդության թիմի հետ միասին պատրաստել ու հաստատման համար ՀԽ-ին տրամադրել դպրոցի տարեկան բյուջեն ու դրա թարմացումները՝ ըստ ՀԽ-ի սահմանած ժամկետների:

7.4. Կատարել դպրոցի ՀԽ-ի կողմից պատշաճ ու տեղին համարվող այլ անհրաժեշտ գործողություններ:

7.5. Համակարգել ՀԽ-ի աշխատանքը ֆինդահայթայթման նոր հնարավորությունների ստեղծման համար: